ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

«ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Ա. Միքայելյանին

Ծանուցում

(«ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/70» ԾԱԾԿԱԳՐՈՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ)

Հարգելի պարոն Միքայելյան

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ Տուֆաշեն, Հայկասար և Հայրենյաց բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցման աշխատանքների կատարման նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով Արթիկի համայնքապետարանի և «ՄԻԿ ՊՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2024 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/70» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի կատարման համար պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները և պայմանագրի 7.15 կետը՝ պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: 2025 թվականի մարտի 19-ից պայմանագիրը համարվում է լուծված միակողմանի և առանց որևէ պարտավորություն առաջացնելով կատարողին:

Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը 2025 թվականի մարտի 19-ին կտեղադրվի https://admin-gnumner.minfin.am/ տեղեկագրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. Ոսկանյան**

Կատարող՝ գնումների համակարգող

Ղևոնդ Գրիգորյան